Բայց նոյն Թորոսի կողմից գրուած է և հետևեալ ոտանաւոր յիշատակարանը. 497ա.

Զվարդապետս սիրունական,
Որ սրովբէիցն է ըղձական,
Եսայի ճծաբան
Եւ առաջնոյն համայնման,
Նկարաւորիս եւ անսպիտան
Որ աշակերտ եմ եւ անարժան,
Հոգովս եմ եղկական
Եւ մարմնով յոյժ ցաւական,
Հայցեցէք աղաւթական
Իմ յանցանացն թողութի.։

Մի քանի տեղ Եսային իւր ձեռքով փոքրիկ յիշատակարաններ ունի, ինչպէս 296բ. 305բ. 354ա.։ Աւետարաններից առաջ եղած խորաններից մէկի անկիւնում (439բ.) նկարուած է աւետարանիչների շաբլոնական զգեստով, սպիտակահեր Եսայի Նչեցին, իսկ 440ա. մի երիտասարդ, գրիչը ձեռքին, որ Յովհաննէս գրիչ սարկաւագ Երզնկացին է (պատկ. 212)։

Ինչպէս վերև յիշեցինք շատ ճոխ նկարազարդուած է Թորոս Տարօնացու ձեռքով, որոնցից մի քանիսը հրատարակել ենք Ա. Զորանեանի «Անահիտ» պարբերականի մէջ (*)։ Մենք առիթ կ'ունենանք մանրամասն կանգ առնելու եւ գնահատելու Թորոսի աշխատութիւնները մեր մանրանկարչական մեծ գործի մէջ, բայց հարկ ենք համարում այստեղ ևս մի քանի նկարներ բերել, որոնք ընթերցողին ընդհանուր գաղափար կը տան այս վաստակաւոր մանրանկարչի արուեստի և նորա ուսուցիչ, հովանաւոր Եսայի Նչեցու ճաշակի մասին, ինչպէս քիչ յետոյ նորա աւետարանից ևս կը տեսնենք, նկարազարդուած դարձեալ նոյն Թորոսի կողմից։ Թորոսի արուեստի մէջ խաչուած է և միացած արեւելեան և արեւմտեան Հայոց մանրանկարչութիւնը. մենք տեսանք որ Կիլիկիայից Գլաձոր եկած գրիչներն ու վարդապետները հաղուագիւտ չէին, նրանցից ոմանք հասուն վարպետներ էին, որոնք իրենց հետ բերած արուեստն ու տեխնիկան պատուաստում են Գլաձորի դպրոցում։ Այսպէս էր, օրինակ, Պօղոս վարդապետ Ակներցին, որի աւետարանի կիլիկեան ոճով նկարազարդուած ձօնն ունինք միայն, Տարսայիճ-Ստեփանոս Օրբէլեանի համար, իսկ բուն աւետարանը կորած է։ Այդ հանգամանքը շատ լաւ երևում է Եսայի Նչեցու Աստուածաշնչի և Աւետարանի մանրանկարչութեան մէջ, հէնց մեր այստեղ ցուցադրած պատկերները կրում են Կիլիկեան (պատկերք 212, 213, 214, 215) և արեւելեան-Սասանեան յետին աւանդների դրոշմ, թեթև կերպով նաև սելջուկեան (*)։ Աւետարանի նկարներից առանձին ուշադրութեան արժանի է Աստուածածնի պատկերագրութիւնը, ինչպէս Օդիգիտրիայի (պատկ. 216), Խանդաղատանքի (պատկ. 217) տիպերի նմանութիւններն են, բայց առաւել ևս որդուն ծիծ տուող տիպը որ մինչեւ վերջերս զուտ արեւմտեան էր համարւում, մինչեւ որ Կայիրէի մօտ, Սակկարայի վանքում, գտնուեցաւ կոպտական մի մանրանկար (Auxarob 157–164). այստեղ մենք ունինք մի երկրորդը ԺԴ. դարի առաջին քառորդից հայ մանրանկարչութեան մէջ (պատկ. 218)։ Թորոսի արուեստը հնագիտական առանձնայատկութիւնների հետ ոչ պակաս հետաքրքրական է իւր գեղարուեստական կողմերով. թէեւ չունի ԺԴ. դարի վերածնութեան տաք շունչը, կիլիկեան արուեստի հիւթալից, պայծառ, վճիտ և խոսուն թովիչ գոյների համադրութիւնն ու ներդաշնակութիւնը. զարուն չէ, որ այստեղ փթթում է, աչքերը պայծառագոյն գալիքին ուղղուած, այլ թեքման և խոնարհման նշաններով արդէն, բայց նա չէ կորցրել ձևերի գեղեցկութեան զգացումը, շարժումների րիթմն ու իմաստը, ամբողջի մէջ գաղափարի



Պատկեր 211.

(*) Անահիտ, 1911, թ. 5-6, եր. 112-115։ Նա և Հայ Էջեր և La Roseraie d'Armenie III. Paris, 1929, p. 246 նոյն հեղինակի։

(*) Ձեռ. Էջմ. № 182/206, կաշէկազմ, 28 × 19 սմ., առաջին երեսին զրոշմուած է մի գեղեցիկ խաչ, երկրորդին երկրաչափական վարդեակ, փակիչը հարտարապետական ժապաւէն՝ ծայրերին բոլորակի մէջ առնուած իրար մէջ հագցրած զոյգ ձուաձևներով։ Կազմը պինդ և գեղեցիկ, կարծում ենք գրչութեան ժամանակից (պատկ. 220, 221, 222)։ Նիւթը մագաղաթ, ամբողջը 589 թերթից, ընտիր բոլորգրով, երկսիւն՝ իւրաքանչիւրը 28,8 × 17,8 սմ., ներքևի ծանօթութիւնների հետ։